

ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑԸ¹⁾

ԴԼՈՒԽ Ա.

Տէր-Գաբրիելը ծնուել է 1802 թուի փետրուարի 26-ին
Թիֆլիզում, որտեղ նորա հայրը Սերովիք Պատկանեանցը ապ-
րում էր իւր կնոջ Մարիամի և զոքանչ Թամարի հետ։ Պատ-
կանեանց ընտանիքը Պօլսեցի էր և իւր հայրենի քաղաքում կոչ-
ում էր տանկարան բառով „Մինասիբ“, որի թարգմանութիւնն
է Պատկանեանց աղդանունը։ Սերովիքի պատվը Տէր-Գաբրիելը և
նորա հայրը Տէր-Պետրոսը քահանայ էին Պօլսի հայտաշատ Ղա-
լաթիս թաղի եկեղեցում²⁾։ Տէր-Գաբրիել աւագ քահանայի օ-
չախը յայտնի էր ամենին, դա մի չայ նահապետական ընտանիք
էր շատ հիւրասէր և դոնարաց և վայելում էր ամենքի սէրն ու
յարգանքը։ Ամենքի առաջ բաց էին այդ „օրհնեալ օջախի“ դրո-
ները, նա մանաւանդ աղքատների և օտարականների, չենք խօ-
սում արդէն Պօլսի վերայից երուսալէմ, չնդկաստան և ուրիշ
տեղեր անցնող, գնացող-եկող նշանաւոր հայերի։ Եփրեմ կա-
թուղիկոսը դեռ իւր արքեպիսկոպոս եղած ժամանակ չնդկաս-
տանի նուիրակութիւնից վերադառնալիս, դտնում է մեծ հիւ-
րասիրութիւն Տէր-Գաբրիելի տանը և ժանօթանում է այդ ըն-
ասանիքի անդամների հետ։ Ներսէս Աշտարակեցին իւր պատանե-
կութեան օրերում, երբ դեռ ուսանում էր Թագւոր վարժապետի
դպրոցում, ընդունւում է իրեւ հարազատ որդի Միւնասիրների
օջախում և ժանօթանում է Տէր-Գաբրիելի թոռան Սերովիքի
հետ։

Սերովիքէն, որ ծնուել էր 1760 թուին, մի ժիր, աչքաբաց

խելօք մանուկ է լինում. նա դարձնում է իւր վերալ յալտնի Զմիւռնացի Խօշենց Մարգարի ուշակրութիւնը, որ լաւ ծանօթ էր Տէր-Գարբիկ Միւնասիրին, և նորա հողացողութեամբ ուղարկւ ում է Վենեափիկ Ս. Ղաղարու վանքը ուսանելու։ Աջարաց Սերովիքէն մտնում է վանքի դպրոցը և լիակատարորէն իւրացնում է հայկական գրարառագիտառութիւնը, կրօնագիտութիւնը, դառնում է ճարտար քերականագէտ և վերադառնում է Տրիեստի վերալով Պոլիս, մանալով ընդամենը Վենետիկում և Տրիեստում 7 տարի։

Պոլսում Սերովիքէն բաց է անում իւր սեփական դպրոցը և սկսում է վարժապետութիւն անել և նորա հոչակը իրբեւ հմուտ քերականագէտի և լեզուագէտի կամաց-կամաց աարածում է մալրաքաղաքի ստուար հայութեան մէջ։ Ամենքը շտապում են իւրեանց որդոցը տալ նորա դպրոցը և զիսաւորապէս հարուստ վաճառականները և ամիրանները։ Նորա յաշողութիւնը սակայն շատ երկար չի տեսում. „Մարգարէ լիւրում գաւառի պատիւսունի“։ Մի քանի տարի գործութիւն ունենալուց յետոյ, նորա դպրոցը փակւում է և իւր կեանքում մի „ալէկոծութեան“ հանգիպելով, թողնում է Պոլիսը և 1794 թուին ընկնում է Թիֆլիս։

Ակստեղ Վրաստանի մալրաքաղաքում ևս Սերովիքէն ձեռնարկում է իւր վարժապետութեան գործին։ նա բաց է անում մասնաւոր դպրոց և հաւաքում, ուսուցանում Թիֆլիսի ամենալաւ և առաջնակարգ ընտանիքների մանուկներին։ Նորա լաւ վարժապետ լինելու հուչակն ալսաեղ ևս հասնում է մինչեւ իսկ Յովսէփ Արդութեանի ականջը, որ Յովհաննէս Լազարեանին մի մասնաւոր թոշակ է կապել տալիս նորան և կոչում նորան „վարժապետ Հալոց“, և այնուհետև Սերովիքէ Միւնասիրը ուրիշ պէս չի կոչում, բայց եթէ Սերովիքէ վարժապետ։ Սերովիքէն իւր վարժապետութեան հետ միասին պարապում է գրականութեամբ։ նա գրում է գրաբառ տաղեր, որոնց բովանդակութիւնը առնում է Աստուածաշնչից և կապում Հալոց կեանքում տեղի ունեցող զանազան երևոլթների և գործող անձանց գործունէութեան հետ։ Եփրեմ կաթողիկոսը ալդ երգերը, ո-

լոնք յետոյ հրատարակւում են մի առանձին հատորով, համարեա
թէ ժալբէծալր բերանացի է իմանում եղել, երգերից մի քանիսն էլ
ներսէսի խնդիրքով և պատու էրով են զրուած յինում, ներսէսի, որ
1802-ի վերջին և 803-ի սկզբին ամբողջ 8 ամիս անց է կա-
ցրել նորա տանը Թիֆլիսում և Գաբրիէլ մանուկին շատ ան-
գամ գրկել ու սիրել:

Եփրեմ արքեպիսկոպոսը, լնչպէս յալտնի է, իւր նուիրա-
կութիւնից էշմիածին վերադառնալուց յետոյ, նշանակուեց Ռու-
սաստանի առաջնորդ, որ Յովսէփի մահից յետոյ մնացել է՝
թափուր: Նա Հաշտարխան գնալիս, հանդիպում է Թիֆլիս,
հիւր է լինում Սերովիէի տանը, վերանորոգում է իւր ծանօթու-
թիւնը նորա հետ և հասնելով իւր տեղը, զրում է նորան, որ
նա ևս երթալ այնտեղ վարժապետութեան պաշաօնով: Հաշ-
տարխանում այդ ժամանակները յալտնի էին մի քանի ջուղայեցի
գերդաստաններ, որոնք ժամանակակից, հալրենակից և ճանա-
պարհակից էին եղել Լազարեաններին, — Գալստեանք, Արզումա-
նեանք, Աղաբարեանք, Ասկարխանեանք, Դելանեանք և միւսները,
և որոնք յաշող առևտրական ծերնարկութեամբ մեծ հարստու-
թիւն էին դիզել և հասել բարօրութեան: Նշանաւոր էին
մանաւանդ երկու եղբայր Աղաբարեանք՝ Նիկողայոս և Յակոբ-
շան, Յովհաննիսի որդիք, որոնք իրանց կարողութիւնը ծեռք
էին բերել Մոսկուալում և վերադարձել, ապրում էին Հաշտար-
խանում: Եփրեմի տեղ հասնելու ժամանակները յանկարծակի
մեռնում է Յակոբշանը և նորա եղբայր Նիկողայոսը, որ ունէր
երեք որդի՝ Յովհաննէս, Պետրոս և Յակոբշան, կամենալով իւր եղբօր
լիշտաակը վառ պարել, խոստանում է իւր համաքաղաքացինե-
րին ի լիշտաակ հանդուցեալին հիմնել մի վարժարան և այդ մա-
սին յայտնում է նոր միայն քաղաքը ժամանած առաջնորդին: Սորանով նա կամենում է, բացի իւր եղբօր լիշտաակը անմահա-
ցնելուց, և միսիթարած լինել Հաշտարխանցւոց, որոնք Յովհան-
նէս աղա Լազարեանի մահուամբ, որ խոստացել էր մի ուսում-
նարան բանալու Ռուսաստանի առաջնորդասնիստ քաղաքում և
չէր կարողացել իրագործել իւր խոստումը, անմիտիթար էին
մնացել:

Ահա այդ Աղաբարեան բացուելիք գպրոցի համար էր, որ զրել էր Եփրեմը Սերովիկին և լորդորել, որ նա թողնէ Թիֆլիսը և երթայ Հաշարիսան. նա նոյն բանի մասին զրել էր և Ներսէսին և խնդրել, որ նա ևս իւր կազմից համորէ նորան և ստիպէ ընդունելու իւր առաջարկութիւնը: Սերովիկին, որ արդէն բաւականին մեծ ընտանիքի տէր էր և բաւական իւր վիճակով, թէև չէր կամենում քանդել իւր առւնը և իւր ընտանիքը ենթարկել աղդքան հեռաւոր տեղ տեղափոխուելու դրկանքներին, բայց վերջ ՚ի վերջոյ ստիպուած է լինում կատարել իւր բարեկամների՝ Եփրեմի և Ներսէսի ցանկութիւնը և մի առժամանակ իւր ընտանիքը թողնելով Թիֆլիսում, զնում է մենակ, մինչև որ կարողանայ տեղեկանալ բոլոր հանդամանքներին և ամեն բան պատրաստել իւր ընտանիքի համար, նա հասնում է Մողդոկ 1805 թուին և հրաման է ստանում Եփրեմից, որ այդ ժամանակները գուրս էր եկել իւր վիճակը շրջադարձելու և գտնում էր Ղղլարում, գնալու այնաևզ, Ղղլարն էլ այդ ժամանակները շատ առաջ էր գնացել, ծաղկել ու բարգասաւմել. նորամէջ էլ առաջ էին եկել մի քանի գերդաստաններ, որոնք քաղաքի իշխանների դեր էին կատարում և իրանց ուղածի պէս կառավարում հասարակութեան գործերն և ընթացք տալիս քաղաքացւոց կեանքին,—Բուրջաղեանք, Փառակեցեանք, Թանդոյեանք, Երուսաղիմեանք, Քաջքաշեանք, Իղմիրեանք, Սերերակեանք, Էղդարեանք և ուրիշները: Սոքա ծանօթանալով Սերովիկի հետ և հաւանելով նորան, հաւաքւում են առաջնորդի մօտ և խնդրում, որ նա թողնէ նորան Ղղլարում վարժապետութիւն անելու համար, բայց առաջնորդը չի համածայնում, ասելով, որ ինքը խոստացել է Հաշտարխանցւոց և չի կարող խոսանալանց լինել: Սակայն որպէսզի բոլորովին անկատար չթողնէ քաղաքացիների խնդիրը, նա թողնում է նոյսա վարժապետ Սիմէօն կաթուղիկոսի եղբայրը գիտնական Գէորգ Խուրեանին, որ եկել էր դոյն իսկ ժամանակները Ղղլար Եփրեմի մօտ քարտուղար լինելու նպատակով:

Եփրեմն և Սերովիկ վարժապետը գուրս գալով Ղղլարից, հասնում են Նոր-Նախիջևան 1805 թուի վերջին Խաղէզ կա-

բապետի քաղաքազիլսութեան վերջին օրերը և իշխանում Յովսէփի առաջնորդարանում։ Նախիչևանի աղաները գնում գալիս են առաջնորդարան, տեսնում, ծանօթանում են Սերովակի հետ նորա էլ Ղղլարեցւոյ նման շատ հաւանում են նորա հեղինաւորութեան և քաղցր ձայնին և միտքներն են դնում խնդրել առաջնորդին, որ նա անպատճառ նորան թողնէ Նախիչևանում, թէև լսած են լինում Ղղլարցւոյ անլաշողութիւնը։ Նախիչևանում այդ ժամանակները կար մի Յովհաննէս սարկաւագ, որ եկել էր Պօլսից, գրագիտութիւն և եկեղեցական երգեցողութիւն էր սովորեցնում և լսանի էր «Յովհաննէս վարժապետ» անունով։ Բայց այդ Յովհաննէսը զրութիւն չգիտէր. նորան պահում էին Նախիչևանում, որովհետև կար մի կուսակցութիւն, ծեր հոգևորականներից ու ծեր մարդկանցից բարդացած, որոնք կամենում էին վերականգնել Պօլսի երգեցողութեան եղանակը Նախիչևանի եկեղեցիներում, որ խանդարուել էր Յովսէփի մտցրած էշմիածնի եղանակով։ Հներին հակառակ էին նոր մարդիկ և նոր հոգևորականները, որոնք Յովսէփի աշակերտներն էին։ Առաջին կուսակցութիւնը սիրում էր Յովհաննիսին, երկրորդն ասում էր, «Վարժարանն էր «Խօնախը», որ մի հասարակ նախակրթարան էր և որտեղ Յովհաննէսը սովորեցնում էր շարականներ, մեղեղիներ և շատ քիչ գրագիտութիւն։ Այդ խօնախը Պատեօմկինի Եկատարինէ կայսրուհու համար շինած նախին պալատն էր, որտեղ պիտի իշխանէր թագուհին Նրիմ գնալու ժամանակ։ Երբ կայսրուհին ու ըիշ ճանապարհով գնաց և Նախիչևան չմասւ, նոյն պալատոք ընծայուեց Յովսէփի Արդութեանին, որ նորա մի մասը գարձրեց առաջնորդարան, իսկ միւս մասը յատկացրեց վարժարանի³⁾։ Ապարանքի շինութիւնը, որ եղել էր Միքայէլ Գէորգեան կողմէթլեանի երկրորդ անգամ քաղաքազլուխ ընտրուելու միջոցին, Նախիչևանի հիմնարկութեան երկրորդ եռամեակի—1782, 83 և 84-ի ընթացքում, միջավայրում փայտակերտ էր, երկու անկիւններում քարաշէն։ Արևմտեան անկիւնի քարտաշէն մասը տեղի հետ միասին 1801 թուին Յովսէփի մահից յետոյ, խառնակութեան ժամանակ, գնել էր Բայազեացի Կարապետ վարդա-

պետից, որ Ս. Խաչ վանքի վանահայրն էր և Նախիշևանի յաշորդը, նշանաւոր Մահտեսի Յովհաննէսի անդրանիկ որդի Մարկոս աղա Տէր-Մարկոսեանը, իսկ արևելեան անկիւնի տանրբնակեռմ էր Եփրեմի թարգման Յակոբ աղան-Եակոբ Մինայիչը:

Եփրեմ առաջնորդարան հաւաքուած Նախիշևանի աղաներին, որոնք խնդրում էին Թողնել Սերովիչին, խոստանալով տալ նորան ոռնիկ և քաղաքի հաշուով վարժած բնակարան ու վառելիք, պատասխանեց նոյնը, ինչ որ Ղուարեցւոց, և աշխատեց համողել նոցա շատանալ Յովհաննէս վարժապետի զիտութեամբ: Բայց Նախիշևանցիք, որ ժառանգել էին Անեցւոց կամակորութիւնը, պնդեցին և իրանց խօսքն առաջ տանելու համար, սկսան զանազան արատներ դնել Յովհաննէսի վերայ, ուրանալով միանդամայն նորա եռամեայ աշխատութիւնը: Մակայն այդ բոլորը զուր էր. Յովհաննէսն եթէ ունէր պակասութիւն, այդ էլ այն էր, որ նա, բացի ժամակարգութիւնից, շարականից և մեղեղիներից, ուրիշ ոչինչ չգիտէր: Բայց այդ էլ շատ քչերն էին հասկանում, ինչպէս Թուֆլիկեան Մանուկ ու Մարտիրոս աղաները, Մահտեսի Յարութիւն Արարատեանը, Ստեփան աղա Փէհէվանեանը, որոնք ժամանակի ուսեալ մարդիկն էին Նախիշևանում և ճանաչում էին նորա դիտութեան չափը: Յովհաննէսի պաշտպանն էին աղա Յարութիւն Խաթրանեանը, որի թոռը Գէորգ Պօղոսեանը սովորում էր նորա մօտ այբուբենը, աղա Պէտրոս Մահտեսի Եղիազարեան Բարամինեանցը, որի աներծագր պատանի Յարութիւն Պօղոսեան Խալիբեանը յաճախում էր խօնախը, և միւսները:

Տեսներով, որ աղաները պնդում են, իսկ առաջնորդը չի համաձայնում, Տուֆլիկեաներն առաջ գալով, ասում են. «Սըրբազան, շնորհակալ ենք, Յովհաննէս վարժապետն ինչ դիտէ, լաւ է սովորեցնում. մեր երեխաները քահանաների չափ ժամակարգութիւն դիտեն, բայց նոքա քահանայ լինելու չեն, այլ վաճառական, որոնց հարկաւ որ է գրութիւն, որ կարողանան իւրեանց գործի նամակները գրել. թո՛ղ Յովհաննէսը գայ այստեղ, և գուրք նորան մի նամակ տուէք գրելու. եթէ հաւանէք նորա գրածին, մենք յօժար ենք շատանալու նորա դիտութեամբ,

իսկ եթէ ոչ, Պատկանեանցը մնայ Նախիջևանում։ Յովհաննէսը դալիս է և ինքը խոսապանում, որ գիր զգիտէ և իւր անունը հաղիւ է գրում և գրածն էլ ինքը գժուարանում է կարդալ։ Եփրեմը մնում է անպատճիւն։ Վիճաբանութիւնն երբ երկարում է, ժամանակի քաղաքագլուխ Խաչերես Հարաշեանը, որ ընտրուել էր Խաղէզ Կարապետից լետոյ առաներորդ եռամեակի—1806, 7, 8-ի համար, ասում է. «Սուրբաղան, եթէ դումեր խօսքը ոտքի տակ կընես, զիտցիր, որ Նախիջևան առաջնորդ ըլլալու չիս. շտէ Գիրգորը, շինտի ծիաւոր կխաւրինք և հոս տաւէթ կանինք, ան ատեն ինչ խատար կամենաս, պաղ չուր զարկ»։ Մէջ է մտնում Տուֆլիկեան Մանուկ աղան և տառում է. «Հարցնենք իրան Պատկանեանցին. նա ստրուկ չէ, ինչպէս կամենայ, այնպէս էլ կլինի։ Գնում են միւս սենեակ, որտեղ Սերովիք վարժապետը նստած՝ Եփրեմի հարկաւոր նամակներն էր գրում, և համոզում են նորան, որ նա մնայ և տարածայնութեան պատճառ չլինի հասարակութեան և առաջնորդի մէջ և չբորբոքուի Եփրեմի և Գրիգորի առաջնորդութեան խնդիրը։

Այդ Գրիգորը Արդութեանի Զաքարեան Գրիգոր վարդապետն էր, որ Յովսէփի մահից լետոյ, Դաւթի կողմն անցնելով և Յովսէփի սուտ կտակը ցոյց աալով ս. Էջմիածնի միաբանութեան, համոզել էր ամենքին նորա կողմն անցնելու և ինքը ևս այդպիսով Դաւթի աչքը մտնելով, եպիսկոպոս էր ծեռնադրուել և Ռուսաստանի առաջնորդ կարգուել։ Այս հանգամանքի մասին Յովհաննէս Գեղարդակիր արքեպիսկոպոսը, որ բանտից աղատուելով, ս. գեղարդն առել, փախել էր Թիֆլիս, մի նամակ էր գրել Սերովիքի ծեռքով Եփրեմին և ամեն բան իմաց տուել։ Եփրեմն էլ զրդել էր Ռուսաստանի Հայերին գրել Դաւթին, որ Գրիգորին առաջնորդ չուղարկեն։ Գրիգորը դուրս գալով ս. Էջմիածնից և գալով Ռուսաստան, ամեն տեղ էլ անարդանքով էր ընդունուել։ Դորանից լետոյ էլ շուտով Եփրեմի խնդիրքով կայսերական հրաման էր արձակուել Պետերբուրգից, որ Գրիգորն արգելուած մնայ Ռուսաստանի սահմաններում։ Ահա՝ այս

Գրիգորի առաջնորդութեան ծգտելու հանդամանքի մասին էր ակնարկում քաղաքապղուխ հալաջեանր:

Սերովբէ վարժապետը յօժարում է Ֆնալ Նախիշեանում այն պայմանով միայն, որ Յովիաննէս վարժապետն էլ Ֆնայ Երգեցողութեան ուսուցիչ: Նախիշեանցիք էլ թէև ընդունում են նորա առաջարկութիւնը և մի առ ժամանակ թողնում են այդ Յովիաննէսին խօնախում, բայց յետոյ ճանապարհ են ծգում նորան Պոլիս: Այսպիսով Նախիշեանցիք Սերովբէի ձեռքով 1806 թուին վերսկսում են այն կանոնաւոր զարոցը, որի հիմքն առաջին անգամ դրել էր Ս. Խաչ վանքում Յովիչի արքեպիսկոպոսը և որ դորանից տաս տարի առաջ, կորցրել էին նսքա, հաշտարխան փոխադրել տալով թէ գպրոցը, թէ աշակերտներին, թէ տպարանը և թէ Շիտապիւտան կոչուած Թաղէոս Մարուգեան վարդապետ վարժապետին ⁴⁾: Սերովբէն ստանձնելով վարժապետութեան պաշտօնը խօնախում, խնդրում է, որ վարժարանն ունենայ մի տեսուչ, որ, գոնէ, շաբաթն երկու անգամ գայ գպրոց և վերահասու լինի, թէ ի՞նչ են անում և թէ արդեօք աշակերտները կանոնաւորապէս յանախում են գպրոց, թէ չէ, բայց աղա Մանուէլ Շահինեանը պատասխանում է, թէ նորան են յանձնում գպրոցը, որովհետեւ ինքեանք մի այնպիսի մարդ չունեն, որ կարողանայ սեսչութիւն տնել: Սերովբէն խնդրում է, որ իրան արուե, գոնէ, մի ցուցակ, որ իմանայ, թէ ի՞նչ պէտք է սովորեցնել, կամ թէ ի՞նչ են ուզում, որ նա սովորեցնէ: Աչակովսկի Սիմէօն աղան պատասխանում է, թէ գիտցածդ պիտի սովորեցնեաւ Սերովբէն ասում է, թէ օգուտ չի լինիլ, եթէ ինքը սովորեցնէ այրուեն և հինգ կանոն սաղմոս. նոքա պիտի տան իրան քիչ շատ զրագէտ աղայք, որ կարողանայ քերականութիւն սովորեցնել: Մարտինեան Մարկոս աղան հարցնում է. «Քերականութիւն նէ մանի դըր»... Մահաեսի Յարութիւն Արարատեանը պատասխանում է, թէ քերականութիւն բիր էօլիչ քիթաբ դըր... Եփրեմը ծիծաղելով ասում է հայոց վարժարան էք հիմնում, հայերէն խօսեցէք: Մանուէլ Շահինեանը պարծենում է, թէ ինքը տեսել է քերականութիւնը. և էփէի մեծկակ թուղթ է, երեմիա Զէլէ-

աղին մէկհամ ունէր»։ Առաջնորդը կամենալով Սերովբէ վարժապետին հանել այդ ծիծաղելի դրութիւնից, ասում է նրան. «Հա, ես լսել եմ, որ Երեմիա Զէլէրին քո աշակերտն է եղել»։ Սերովբէն երբ վերադարձել էր Տրիեստից, Ստեփան ամիրան առաջինն էր եղել, որ իւր որդուն տուել էր նորան աշակերտութեան. Քերականութիւնն էլ հէնց այն աարին էր տապագրուել, երբ Սերովբէն դնացել էր Ղաղարու վանքը. տպագրութիւնը այդ ժամանակ դեռ շարունակւում է եղել և նա սովորել էր անկաղը թերթերի վերայ։

Գլուխ Բ.

Սերովբէ վարժապետը նախիջւանում ունենում է 350 աշակերտ, բոլորեքեան էլ բորոտ. նա բժշկում է նոցա, մաքրութեան ընտելացնելով և զանազան գեղեր տալով նոցա, որ մատուկարարում էր նախիջւանում այդ ժամանակ լայտնի ծէքիմ կարապետը։ Առաջին անգամ նա է շինել տալիս նստարաններ, որոնց վերայ նստեցնում է տաս-տաս աշակերտ. երկու ժայրին նստողները լինում էին գրագէս և ուսուցանում էին իրանց մօտ նստած չորսին։ Աշակերտների հետաքրքրութիւնը զարթեցնելու, նոցա դրադեցնելու և նոցա մէջ սէր լարուցանելու համար դէպի ուսումը և դպրոցը, Սերովբէ վարժապետը իւր դասասառութիւնն անում էր հեքեաթի ծեռով. նա ս. Գլըքից, Հայոց, Հռովմայեցւոց և Յունաց պատմութիւններից զանազան հետաքրքրական դէպելը էր պատմում և աշակերտները սիրով լսում էին, աշակերտները միմեանց հարցեր էին տալիս և վիճարանութիւն էին անում. ով որ լաւ էր պատասխանում, վեր էր նստում, ով որ վատ— վար։ Առաջին անգամ Սերովբէ վարժապետն է մացնում նախիջւանց մէջ միամին կարդալ գրելու եղանակը, մի խօսքով, նա մտցնում է ուսուցան այն ծեսն ու ոճը, որ ինքը տեսել էր Վենետիկում և Տրիեստում։ Սակայն նորա դործը շատ դժուարութեամբ է առ աշդնում, որովհետեւ աշակերտները կանոնաւորապէս չէին լանախում դպրոց, ուսումնական պիտոյք չէին բերում և, որ գըլ-խստորն է, աղաներն ամենքն էլ պահանջում էին, որ Սերով-

րէն իրանց խնջոյքների ժամանակ իւր աշակերտներով գոյ երդէ նոցա աներում։ Նա ստիպուած է լինում այս պահանջին բաւականութիւն տալու համար, ընտրել 12 ձայնաւոր աշակերտ և սովորեցնել նոցա իւր, Միիթար արքայի և Բաղդասար զրպրի երգերից։ Նա շարադրում է ուրիշ երգեր էլ, որոնց բովանդակութիւնն առնում է նախիչևանի կեանքից, ինչպէս բարեկենդանի երգը, որ նա գրում է 1807 թուին և որ սկսում էր «Սիրով Սուրբ Հոգի ոյն կապակցեալ նոր-նախիչևանցիք» խօսքերով և «Աստուած հղօր» երգը. որի մէջ զովարանում էին քաղաքի բոլոր նշանաւոր աղաներն անուն անուն։ Այս վերջին երգը մեծ խովովութեան պատճառ է լինում, որովհեաւ բոլորերեան էլ պահանջում էին, որ երգն անվերջ շարունակուի և ամենքի անունն էլ մէջը լիշուի, մինչև խկ և նոցա անունը, որոնք ոչ մի արժանի լիշտաակի դործ չէին արել հասարակութեան համար։

1807-ին, Երբ Եփրեմը գարծեալ եկել էր նախիչևան, գալիս է նախիչևան և Ներսէս Աշարակիցին, որ այդ ժամանակ գեռ վարդապետ էր, և իշևանում է առաջնորդարանի արեւելեան անկիւնի քարաշէն բնակարանում Մահաեսի Աղարէկեանի աան հանդէպ, որի վերնայարկն հասարակութիւնը վարձել էր Սերովբէի համար, խկ ներքնայարկում բնակում էր իւր զաւակների հետ Աղքիրմանցի Տէր Յովհաննէսի մատաղահաս այրի երիցուհի Բոհալը, որ Մարտիրոս Տուֆլիկեանի քենին էր։ Նա բերել էր Դանիէլ կաթուղիկոսի կոնդակը Ռուսաստանի հայերին, ինչպէս նոյնպիսի մի կոնդակով Պօլիս էր գնացել և Յովհաննէս Գառնակերեան եպիսկոպոսը Ակստեղ բնականապէս վերանորոգում է նորա և Սերովբէի հին բարեկամութիւնը։ Նո լայանում է իւր անբաւականութիւնը թէ նորան, որ խարուելով ամեծ զդակ նախիչևանցիների մեծաբանութիւնից, Ցնացել էր նոցա մէջ և սկսել էր երգերով գովարանէլ նոցա, այն ինչ նոցա մէջ չկար մէկը, որ կարողանար ազգի օգուտը, կամ վնասը նիշտ որոշել, և թէ առաջնորդին, որ մռացել էր իւր առած խոստումը հաշտարխանցւոց և համածայնել էր թողնել նորան նախիչևանում։ Եւ որովհետե նա իւր

այս գժգոհութիւնը լայտնում էր շատ անգամ դպրոցում ի լուր աշակերտների, որոնց մէջ այդ ժամանակները ծաղկել էին մի քանիսր՝ Մելքոնեանը, Տիկալէննեանը և աիրացու կարապետ Խալվաճէնեանը, և ի լուր գպրոցի մշտական այցելուների՝ Ցուփ-լիկեանների, Պետրոս Բարասինեանի և Պօղոս Խաթրանեանի, թէ Սերովրէն և թէ այդ տղաները շատ վշտանում էին, վախենալով, որ չինի թէ այս բոլորը հասնի քաղաքագույն հաւաշեանի ականջը և խոռվութեան պատճառը լինի:

Սորանից յետոյ շուտավով պատահում է մի դէպք, որ մի կողմից արդարացնում է Սերովրէ վարժապետի երկիւղն ու կասկածը, միւս կողմից էլ սառնութեան առիթ է լինում նորա և ներսէսի մէջ, սառնութեան, որ յետագայ հանգամանքների աղդեցութեան ներքոյ գնալով աճում ու զարգանում է, փոխուելով թշնամութեան ու տաելութեան, որ յետոյ անցնում է և նորա որդի Տէր-Գարրիկի վերայ ու այնքան գժբաղդութեան պատճառը լինում նորա համար։ Ասում են, որ մի անգամ առաջնորդը, Ներսէսը և Սերովրէն հրաւիրուած են լինում ինչշրեի Զորայ Սահակ աղայի տունը։ Հացկերոյթի ժամանակ Ներսէսը կամենում է իմանալ, թէ կա՞ն արդեօք և ո՞լք են Քէֆէցի նը-շանաւոր Տէր-Բարթուղիմէոսի և Եւպուաորիացի նշանաւոր Տէր-Մարկոսի ժառանգները, որոնց այնքան սէր ու լարգանք է ցոյց առւել Յովսէփ Արդութեանը գաղթականութեան ժամանակ։ Նորսն պատասխանում են, թէ Տէր-Բարթուղիմէոսի որդին լինում է համանուն Տէր-Բարթուղիմէոս քահանան Քէֆէցում, նորա որդի Մահաեսի Թորոսը, որ գալիս է Նախիջևան, տեսնում է Յովսէփին և սէր ու պատիւ վայելում նորանից, և դորա որդին Տէր-Յակովը, որ գնացել է Մոսկով. իսկ Տէր-Մարկոսի որդին լինում է համանուն Տէր-Մարկոս քահանան Եւպատիայում, դորա որդին էլ Մահաեսի Յովհաննէսը, որ գալիս է Նախիջևան և Մահաեսի Թօրոսի հետ տեսնում Յովսէփի հետ և դրա որդին Մարկոս աղան, որ ապրում է առաջնորդարանի արևմտեան անկեան քարաշէն տան մէջ և հէնց այժմ էլ գտնում է այստեղ։ Ներսէսն իւր զարմանքն է լայտ նում, թէ ի՞նչպէս է եղել, որ պալատի մի մասն անցել է ո-

առար մարդկանց ծեռքը, և ի՞նչ իրաւունք ունէր Բայազիկացի
կարապետ վարդապետը ծախելու այն տունն ու տեղը: Մար-
կոս աղան շատ բարկանում է, բայց չի պատասխանում. նորա-
տեղ անպատճեմ է Ներսէսին քաղաքազլուխ հալաջեանը,
մատը Յ անդամ զարնելով սեղանին և ասելով. «Վարդապետ,
դու հոս էկիլիս մէջերս կոփւ կուղիս ծղել. բարի եկար, գնա՛
վանք, հոն ինչ դուղիս, մամշէ, հոս ծանրդ չելէ»: Մէշէն մըտ-
նում և հաշտեցնում, և քաղաքազլուխը ի նշան հաշտութեան
միւս օրն առաջնորդին և Ներսէսին իւր առւնն է հրաւլըում
և արդ առթիւ մեծ հացկերոյթ սարքում: Ալդտեղ պատեհ րո-
պէ գտնելով, Մարկոս աղան ասում է Ներսէսին, որ եթէ նա
չի հաւատում, թէ տունը գնուած է Կարապետ վարդապետից,
թող գայ իւր մօտ և նա «քուփիչիները մէմէկ-մէմէկ նորա աչքի
պէպէր կըխօթէ»:

Ներսէսը դորանից յետոյ իրրե թէ գնում գոլիս է Մար-
կոս աղալի տունը, որ ամրագիրը տեսնէ, և ծանօթանում է
աղախնի հետ, որ նկատում են Մարկոս աղան և Բահալը երի-
ցուհին, որի հետ իրրե թէ նոյնպէս մօտ ժոնօթութիւն է կա-
պած լինում վարդապետը: Մարկոս աղալի տան և առաջնոր-
դարանի մէջ լինում է մի դռնակ: Ալս դռնով մի օր Ներսէսն
իրրե թէ գնում մտնում է բաղանիս, որտեղ այդ ժամանակ
լուացք է անում եղել աղախնիր: Մարկոս աղան այդ նկատե-
լով, գնում փակում է վերան դուռը և ինքը շտապով վազում
է առաջնորդի մօտ, որ բերէ ցոյց տայ նորան: Բահալը, որ
քննում է եղել Ներսէսի ամեն մի քայլափոխը, տեսնելով, որ
Ներսէսն անժամանակ մտաւ Մարկոսի տունը և Մարկոսն էլ
շտապով դուրս եկաւ և գնաց առաջնորդարան, կասկածում է
և գնում իմաց է տալիս Սերովիկ վարդապետին, որ գոլիս բայ
է անում դուռը և աղատում Ներսէսին: Ալդ օրուանից ահա՛,
ասում են, ընկնում է սառնութիւն Ներսէսի և Սերովիկի մէջ,
որովհետեւ դա իմացել էր նորա կեանքի գաղտնիքներից մէկը,
և Սերովիկի և Մարկոս աղայի մէջ, որովհետեւ նա խանգարել
էր նորա դարանակարութիւնը: Թէ որքան նշմարատութիւն կար
այս կանացահնար վիպասանածե պատմութեան մէջ,—մենք

չենք կարող ասել, բայց որ մի բան պատահած պէտք է լինի և սառնութիւն ձղած նոցա յարաբերութեան մէջ հէնց այդ ժամանակները, այդ սաոյդ է: Տէր-Գարրիէլը, դոնէ, որ այդ պատմութիւնը ի՞ր հօրից պէտք է լսած լինի, հաւատում էր դրան և այդ համարում սկզբնական պատճառ Ներսէսի տաճած ատելութեան գէպի ինքը և գէպի նորա հայրը:

Քանի որ Եփրեմը Նախիշեանութիւն էր, Սերովիչ վարժապետը տեսնելով դպրոցի ախուր վիճակը և համոզուելով, որ այդպիսի հանգամանքներում ինքը չպէտք է կարողանայ շատ բան անել, խնդրում է նորան, որ տանէ իրան Հաշտարիսան, բայց այս անգամ արդէն ինքն առաջնորդը խնդրում է, որ նա մնայ, մինչև որ ինքն երթայ Հաշտարիսան և ամեն բան պատրաստէ: Սերովիչն տեսնում էր, որ Նախիշեանում խօսողը շատ է, քան թէ լսողը, իսկ հստկացողը ևս աւելի քիչ: Թէև այն չորս այցելուները սիրտ էին տալիս նրան և լաւ համբաւ տարածում դպրոցի մասին, բայց նա չէր կարողանում հաշտուել: Քերականութիւն սովորելու համար պատրաստի աշակերտներ չկային. 300 աշակերտներից, որոնք հաւաքուած էին մի գահ-լինի մէջ, կէսից տւելի գիրք չունեին: Ով պէտք է նոր միայն այբուբենը սովորէր, նա բերում էր մի մեծ նարեկ, որի վերայ վարժապետը պիտի նորան դրէրը նանաչեցնէր, միւսն աւարտում էր գրերը և գիրքը վաճառսւմ էր ընկերին և ինքն տռանց գրքի էր մնան: Մինչև որ Երուսաղէմ գնացողները վերադառնային և Պօլսից գրքեր բերէին: Գրքերը բերում էին, բայց ոչ քերական և ոչ քերականութիւն: Բերում էին Ագաթանգեղոս, Պղնձի քաղաքի պատմութիւն, Էֆիմերսէ, Տօնացոյց, ոմանք ութ կանոն Սաղմոս, ոմանք էլ ժամագիրք: Ագաթանգեղոսի վերայ մէկը տառերի հեղեղն էր սովորում, միւսը գլուրավարժութիւն էֆիմերտէի վերայ: Երեխաները մինչև իրանց հասակի 11 տարին այսպէս ժամանակ էին կարցնում, լեռոյ ծնողներն առնում, տալիս էին իրանց որդոցը վաճառականների մօտ. նոցա ստացած ուսումը հէնց այն էր լինում, ինչ որ նոքա լսել և ուսել էին ուսուցչի արած պատմութիւնից: Յուսահատութեան մէջ էր Սերովիչն:

1808-ին գալիս հասնում է Նախիշեան և Սերովիչի ընտակինքը՝ Մարիամ, որդիքը՝ Գէորգ, Գարրիէլ և Պետրոս և

գործանչը՝ թամար, որ իւր դալու քառասներորդ օրը մեռնում է և թաղւում համբարձման եկեղեցու սրահի գերեզմանատանք: Վեց տարեկան Գարբիկը մեծանում է նախիշեանի վերջիշեալ խաւար կեանքի խաւար մենողորտի մէջ, որտեղ ոչ ճատդ էր երևում, ոչ լուսատու աստղ: Նորա հայրական տունը միակ օվաղիսն է լինում մեծ անապատի մէջ, որսեղ նորա մանկական հողին զովանում է, միաբր ովարարւում: Նորա հայրը լինում է նորա համար միակ լուսատու աստղը, որի հառագյթներով գեռ այդ վաղ հասակից առաջնորդւում է նա և նախապարաստում ապագայ տառապալից կեանքի ու գործունէութեան համար: 1808 թուի Հոկտեմբերի 9-ին մեռնում է Դանիկը և ընտրւում է Եփրեմը, որ 1807-ին, Ներսէսի մեկնելուց յետոյ, ինքն էլ դնացել էր Հաշտարխան: Նա այնտեղ անսնելով, որ Աղաբարեան դպրոցը բոլորովին պատրաստ է, 1809 թուի Սեպտեմբերին նորից գալիս է նախիշեան, որտեղ և կնքահայր է լինում Սերովրէի նորածին աղջկան, անունը գընելով Կատարինէ և ինքն անծանք շքեղ հանդիսով բերելով եկեղեցուց տուն: Հենց այդ ժամանակն էլ նա պախարակելով նախիշեանցւոց անհոգութիւնը և անփութութիւնը դէպի իրեանց օրդիների ուսման գործը և դէպի իրեանց ուսումնարանը, առաջարկում է Սերովէին տեղափոխուել Հաշտարխան և ստանձնել Աղաբարեան վարժարանի Հայոց լեզուի վարժապետութեան պաշտօնը, իսկ ինքը իրեն ընտրեալ կաթուղիկոս դնում է Պետերբուրգ կալսեր տեսութեան: Երբ որ նա Պետերբուրգից վերադառնում է Հաշտարխան, արդէն դտնում է Սերովրէին պաշտօնի մէջ Աղաբարեան դպրոցում: Նա Ս. Էջմիածին մեկնելուց առաջ, երբ վերջին պատարագն էր մատուցանում Պօղոս.Պետրոս եկեղեցում և պիտի վերջին հրաժեշտը մատուցանէր Հաշտարխանցւոց, քարոզ է խօսում և կանչելով ատեան աղա Նիկողայոս Աղաբարեանին, ասում է, թէ ինքը նորա խնդիրը քանդել է Սերովրէի առւնը Թիֆլիսում և բերել Ռուսաստան: ճանապարհին նա ընկել է նախիշեանցւոց ծեռքը, և այնտեղ նախիշեանում կը կին տուն շինել: Երբ նորա վարժարանը պատրաստուել է, այս տարի յատկապէս ինքը գնացել է նախիշեան և կրկին քանդել նորա տունը և բերել Հաշտարխան, և ահա այդ կարճ ժամանակամիջոցում ամենքն էլ վայելում են դորա երե-

խայրիքը այնպիսի կարգերով ու ժամասացութեամբ, որ Հաշտարխանը երբէք տեսած չէ: Սերովրէն միայն երգեցողութեան վարժապետ չէ, նաև Պռոմեթէոսի պէս գնացել է և Արքայութիւնից հայոց լեզուի լոյսը դողացել բերել, որ ազգի տան ճրադր վառէ: Նորա պաշապանը ինքն է, Ս. Էջմիածինը, յաջորդ կաթողիկոսները և առաջնորդները: Մինչև նորա դպրոցից մէկը ուսման վկայական չունենայ, առաջնորդը չհամարձակուի նորա դիմին ծեռք դնելու, և թող նղովեալ լինի այն իշխանը, որ կ'կամենայ տգէտ քահանալ ծեռնադրել տալ: «Ահա», վերջացնում է նա իւր խօսքը, ևս իմ հայրապետական իշխանութեամբըս հրապարակով տալիս եմ նրան աւագ քահանաներին միայն կրելիք թասակը և գաւազանը եկեղեցուց դուրս բռնելու ծեռքին և իմ մատի մատոնին: Եւ հանում է մատանին մատից և դնում է Սերովրէի մատը, ծոցից թաւշեայ թասակը և հաջնում նորա զուրիը և բերել տալով գաւազանը, տալիս նորա ծեռքը, Սերովրէի, որ այդ պատարադին դպրապետութեան պաշտօն էր կատարում 5):

Առաջնորդ Եփրեմի տեղ 1811-ին ընտրուում է Յովհաննէս Գառնակերեանը կամ Յակոբեանը: Այդ Յովհաննէսը մի տգէտ, բայց հեղահոգի մարդ էր, նորա ընտրութիւնը եղել էր Ներսէսի հանութեամբ, որ կարողանայ նորա միջոցով իւր ծեռքին պահել Ռուսաստանի կարևոր թեմը: Նոր առաջնորդը, որ «ճոխսաբան» անունն էր ստացել, որովհետև Եփրեմի ծեռնադրութեան օրը մի լաւ քարոզ էր խօսել, որ շարադրել էր ներսէսը, հրահանգ էր ստացել կաթողիկոսից, որ Հաշտարխանում ամեն բանում զեկավարուի Սերովրէ վարժապետի խորհուրդներով, բայց նա տեղ ժամանելով, ընկնում է Ս. Աստուածածին եկեղեցու երեցփոխ մոմչի Սարգիս կամ Սալլահ Սարգիս կոչուած Բենդերցեանի աղդեցութեան տակ, և ոչ թէ միայն չի լսում Սերովրէի խորհուրդներին, այլև շատ բանում և շատ անգամ իսպառ հակառակ է գնում նորան: Երբ Յովհաննէսը առաջին անգամ գալիս է Նախիջևան, քաղաքացիս ընդառաջ չեն գնում նորան, և նա սովիպուած է լինում ուղղակի գնալ ս. Խաչ վանքը, յետոյ միայն նոքա բերում են նորան Խաչերես Աղաջակեանի տունը, որ վարձել էին նորա համար: Նա աղաների ցանկութեամբ անուս քահանաներ է ծեռնադրում և ամե-

նիկ հաճոյ լինելու համար, յաճախ այշելութիւն է անում աղաներին, ներկայ է դոնւում նոցա սարքած խնջյբներին և սովորութիւն է արած լինում խաչակնքելու գինու բաժակների վերայ նորա միակ լաւ գործը նախիչևանում լինում է այն, որ հաշուեմատեաններ է մտցնաւմ եկեղեցիների մէջ, որոնք սակայն մնում են անգործադրելի: Նախիչևանցիք նորա մասին ասում են եղել. «Սուրբազանը աղէկ մարդ է. որուն համար կը խնդրենք, չէ չի ասիր, կ'ծեռնազրէ, զրել-կարդալ գիտէ-չիտէ, չի հարցունուր. ինքնալ մեղի պէսնակ սայէն կրքալէ, մեզի ալ անկէ աղէկ վարդապետ ինչերո՞ւս է պէտք. Աստուած իրեն կեանք տալ»:

Հաշտարիսանում էլ առաջնորդն առաջինն է լինում, որ խանգարում է կաթուղիկոսի տուած պատուերը աղէտ քահանաներ ծեռնադրելու վերաբերմամբ. նա Բենդերցիեանի ցանկութեամբ քահանայ է ծեռնադրում նորա եղբօրորդուն Յովհաննէսին և կնոջ ազգական Սարգսին, որոնցից առաջինը կարող էր լինել լաւ աւագակապետ, իսկ երկրորդը զուրկ էր թէ խելքից և թէ պատակառանքից: Ժողովրդի մէջ շփոթ է ընկնում, և Բենդերցիեանն ու նորա սիրելի Տէր-Սարգսի քահանայ Բերեժանեանը հասկացնում են առաջնորդին, թէ այդ աղմու կի պատճեառն ու ժողովրդին զրգողը Սերովրէն է, իսկ ժողովրդի մէջ տարածում էն, թէ Սերովրէն է կաշառքով սուտ վկայական տուել, թէ Սարգսին ու Յովհաննէսն ուսել են դպրոցում, այն ինչ գոքա երկուսն էլ աղա Նիկողայոս Աղաբարեանի հրամանով գուրս էին արուած դպրոցից, որովհետեւ «ըրուտ» բառը հոլովելիս, աղսյի առաջ ծիծաղելի հնչւններ էին հանել բերաններից: Այս բոլոր կատարուածի համբաւը հասնում է կաթուղիկոսի ականջը. նա մի նամակ է գրում այդ առթիւ Սերովրէին և գնում Յովհաննէսին զրած թղթի մէջ բաց, որ նա էլ կարգայ: Այդ բաց նամակի մէջ Վեհափառը զրել էր Սերովրէին, թէ «Ոչ բարւոք դաստիարակեած», այսինքն լաւ չես խրատում առաջնորդին: Բայց այս էլ իրատ չի լինում առաջնորդին. նա 1814 թուին գնում է Մոսկով և Լազորեան Յովակիմ աղսյի խնդիրով քահանայ է ծեռնադրում հաշտարիսանցի բաշմաղչի Մանուկի որդուն Գէորգ Աղամբարեանին, անունը փոխելով Յարութիւն, որին Եփրեմը զեռ իւր առաջնորդութեան օրով հրամայել էր հոգեւոր կոչումից հանել ⁶⁾:

(Յաջորդ Թուով)

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻՉ